ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1908 թ. Օսմանյան հեղափոխության հետևանքով տապալվում է աբդուլհամիդյան բռնակալությունը, և իշխանության են գալիս երիտթուրքերը: Վերահաստատելով սահմանադրական կարգերն ու համաշխարհային հասարակության առջև հանդես գալով որպես ազատախոհության պաշտպաններ՝ նրանք առաջին հերթին ցանկանում էին երկիրը հեռու պահել եվրոպական մեծ տերությունների միջամտություններից: Սակայն դա նրանց չհաջողվեց: Ազգային հարցում, որն ամենից շատ էր առիթ տալիս օտար միջամտությունների, նրանք որդեգրեցին Աբդուլ–Համիդի գործելակերպը և ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարեցին ավելի դաժան և բիրտ քաղաքականություն: Ապակենտրոնացման գաղափարի մեջ տեսնելով իրենց երկրի կործանումը՝ երիտթուրքերը կտրականապես հրաժարվեցին այդ իմաստով կատարել որևէ բարեռորոգում:

Անհամեմատ ծանր էր արևմտահայության կացությունը: Բեռլինի կոնգրեսի 61–րդ հոդվածով խոստացված բարեռորոգումները մնացին որպես մեռած տառ: Դրա փոխարեն երիտթուրքերը ավելի ուժեղացրեցին ճնշումներն ու բռնությունները՝ վերջնական նպատակ ունենալով հայ ազգի ֆիզիկական ոչնչացումը:

Կայսրությունում չլուծված ազգային հարցը բախումների պատճառ հանդիսացավ, որոնցից էր նաև 1912 թ. ծագած Բալկանյան 1–ին պատերազմը, որի արդյունքում Թուրքիան պարտվեց և կորցրեց իր եվրոպական տիրույթները: Սա որոշակի հույսեր ներշնչեց հայ քաղաքական շրջանակներին՝ օգտագործելու համար ներկա պատեհ առիթը՝ Թուրքիայի թուլության ու Արևելյան հարցի վերաբացման առումով, և միջազգային սեղանի վրա նորից դնելու հայկական բարեռորոգումների խնդիրը: Հայ ժողովուրդն իր մեծամասնությամբ խնդրի նման լուծման մեջ

---

* Հովակիմ Բոյաջյանը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ է:

հանդես եկավ միասնաբար: «Հատուածական, դաւանական կամ կուսակցական նկատումները,– գրում էր արևմտահայ հայտնի գործիչ Վ.Փափազյանը,– բախտորոշ այդ օրերուն չքացած էին Թուրքիոյ հայութեան միտքէն»[1]:

Ինչպես և անցյալում, թրքահայությունն իր խնդրի լուծման հույսերը մեծամասամբ կապում էր Ռուսաստանի՝ որպես ամենաշահագրգիռ պետության հետ: Սակայն հայ քաղաքական շրջանակները, հաշվի առնելով Հայկական հարցի միջազգային բնույթը, գիտակցում էին, որ Ռուսաստանը, առանց մյուս տերությունների հետ համաձայնեցնելու, Թուրքահայաստանի նկատմամբ միայնակ չէր կարող քայլեր ձեռնարկել: Այդ իսկ պատճառով կարևորվում են դիմումները մեծ տերություններին:

Պոլսի Ազգային Պատրիարքարանը, թուրքահայոց խնդրի լուծման ամենաշահագրգիռ կողմը լինելով հանդերձ, չէր կարող իր վրա ստանձնել այս գործը: Պատրիարքարանի նման քայլը թուրքական կառավարության կողմից կդիտվեր որպես դավաճանություն՝ առաջ բերելով եվրոպական միջամտություն երկրի ներքին գործերին: «Բացարձակապէս անհնար է,– կաթողիկոսին ուղղած նամակում գրում էր պատրիարքի քարտուղար Գ. Պալաքյանը,– Ազգային Պատրիարքարանիս յայտնի կէրպով գործին մէջ մխրճվիլ որ կրնայ ոչ միայն օգտակար չըլլալ, այլեւ աղետաբեր հետեւանքներ ունենալ»[2]:

Ուստի այս առաքելությունն իր վրա է վերցնում Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսը, որն իր՝ 1912 թ. նոյեմբերի10–ի N1482 կոնդակով եգիպտահայ հայտնի հասարակական–քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային նշանակում է իր ներկայացուցիչն եվրոպական երկրներում բարենորոգումներ Թուրքիայի հայկական վիլայեթների պահանջելու համար: Ստանձնելով այս պաշտոնը՝ Պ.Նուբարն իր գլխավորությամբ կազմում է Ազգային Պատվիրակություն և մեծ տերությունների մայրաքաղաքներում ծավալում եռանդուն գործունեություն՝ ղեկավար շրջանակների և հասարակական կարծիքի վերաբերմունքը ի նպաստ թուրքահայոց խնդրի դարձնելու համար:

Մեծ տերությունների ղեկավար շրջանակներին ուղղած իր դիմումներում Պ. Նուբարը ջանում էր հիմնավորել հայկական բարենորոգումների իրականացման անհետաձգելիությունը և դրսևորում ցույց տալ տերությունների շահը: Քաջածանոթ լինելով թուրքահայոց խնդրի անցյալին՝ Պ. Նուբարը գիտակցում էր, որ բարենորոգումների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է իրական երաշխիք, առանց որի դրանք կմնային որպես մեռած տառ, ինչպես դա եղել էր անցյալում: Նման երաշխիք կարող էր հանդիսանալ միայն մեծ տերությունների վերահսկողությունը: Եվ հենց եվրոպական վերահսկողության պահանջն էլ

հանդիսացավ Պ. Նուբարի՝ տերությունների ղեկավար շրջանակներին ուղղված դիմումների անկյունաքարը. «Փորձը ցույց տուած է,– գրում էր նա,– որ բարենորոգումները երբ հակակշռով մը չեն պաշտպանված, ճակատագրականօրէն խոստումի վիճակին մէջ կը մնան և եթէ նոյն իսկ գործադրութեան դրուին, քիչ ատենէն կը դադրին»[3]:

Արևմտահայության պահանջներից այս կետն էր, որ ամենից շատ հանդիպեց թուրքական իշխանությունների կատաղի դիմադրությանը, որոնք փորձում էին ցույց տալ դրա անօրինականությունը: Թուրքական «Թասֆիրի Էֆքյար» թերթը արևմտահայերի այդ պահանջը համարում էր «իսկությունն ու սահմաններն անծանոթ կարգի պահանջ»[4]: Մինչդեռ դա կեղծիք էր: Դեռևս 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61–րդ հոդվածով Թուրքիան պարտավորվել էր հայաբնակ նահանգներում բարենորոգումներ կատարել՝ մեծ տերությունների վերահսկողության ներքո: Այդ մասին Պ. Նուբարը գրել է. «Օսմանեան կառավարութիւնը հակակշիռը ընդունելով նոր զիջողութիւն մը չըներ, այլ միայն կատարած կ'ըլլայ յանձնառութիւն մը զոր իր նախորդները ընդունած են և որով ինքն ալ կապուած է»[5]:

Թեև Պ.Նուբարի պաշտոնն էր մեծ տերություններից պահանջել բարենորոգումների իրականացումը, սակայն նա մեծ կարևորություն էր տալիս այն բանին, որպեսզի թուրք ղեկավարներն իրենք ևս զգան դրանց անհրաժեշտությունը: Նա հասկանում էր, որ ինչքան էլ մեծ տերությունները ճնշում գործադրեն Թուրքիայի վրա, միևնույն է, բարենորոգումների ընդունումն ու իրականացումը մեծապես պետք է կախված լինի նրա կամքից և, հետևաբար, ճնշման տակ ընդունված բարենորոգումների իրականացումը ամեն կերպ կխոչընդոտվեր կառավարության կողմից: Այս մասին «Սաբահ» թերթի խմբագիր Տ. Քելեկյանը գրում էր. «Այս խնդիրը թուրքերուն ալ յօժարութիւնօվը պիտի լուծվի – Ռուսիա չի կրնար ֆերման մը հրատարակել Հայոց համար, ֆերմանը նորէն Թուրքերը պիտի հրատարակեն»[6] :

Ցանկանալով խուսափել թուրքական կառավարության հակառակություններից՝ Պ. Նուբարը փորձում էր ցույց տալ հայերի պահանջների չափավորությունն ու օրինականությունը, ինչպես նաև՝ որ հայերը չունեն ոչ մի հետին նպատակներ և ոչ մի պետության (հատկապես Ռուսաստանի) ձեռքին խաղալիք չեն դարձած: «Պատգամաւորութիւնը,– գրում էր նա,– յանուն Հայերու չպահանջեր ոչ բաժանում, ոչ անկախութիւն, ոչ քաղաքական ինքնաւարութիւն, այլ միայն Պերլինի Դաշնագրին 61–րդ յօդուածովը խոստացուած բարենորոգումները»[7]:

Պ. Նուբարի պահանջով Ազգային Պատվիրակությանը անդամակցում են միայն թուրքահայերը, ցույց տալու համար, որ Պատվիրակության կազմությունը ոչ մի պետության կողմից չի ներշնչվել:

Թուրքիայի ղեկավար շրջանակների կասկածները իր գործունեության նկատմամբ չհարուցելու համար է, որ Պ.Նուբարը 1912 թ. դեկտեմբերի կեսերին այցելում է Ֆրանսիայում թուրքական դեսպան Ռիֆաթ փաշային և հիմնավորում հայկական բարեռորոգումների չափավորությունը: Սակայն սրա հետ մեկտեղ պետք է ասել, որ Պ.Նուբարը ոչ մի հավատ չընծայեց թուրքերին՝ բարեռորոգումներ մտցնելու խնդրում և երբեք չհրաժարվեց եվրոպական վերահսկողության պահանջից: Կաթողիկոսին գրած 1913 թ. փետրվարի 10-ի նամակում նա ընդգծում էր. «Պատվիրակությունը երբեք չի հավատում Դռան խոստումին և անտրամաբանական է համարում բանակցել նրա հետ»[8]:

Սակայն չնայած այս ամենին Թուրքիայի ղեկավարները կատաղի պայքար մղեցին եվրոպական վերահսկողությամբ Արևմտյան Հայաստանում բարեռորոգումների իրականացման դեմ: Նրանք չփորձեցին դրանցում տեսնել իրենց պետության շահը: Եվրոպական վերահսկողության տակ իրականացված բարեռորոգումները ագդակ կհանդիսանային Օսմանյան կայսրության ասիական տիրույթների տարածքային ամբողջականության պահպանման համար և թույլ չէին տա այդտեղ ոչ մի պետության և հատկապես Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը, մի բան, որին դեմ էին մեծ տերությունները: Թուրքական իշխանությունների հիմնական նպատակն էր ամեն կերպ խուսափել երկրի ներքին գործերին եվրոպական միջամտությունից, ուստի մեծագույն ջանքեր գործադրեցին նաև խափանելու համար Պ. Նուբարի գործունեությունը:

Սակայն թուրքական իշխանությունները Պ.Նուբարի վրա չունեին ոչ մի ազդեցություն՝ արգելել տալու համար նրա դիմումները: Միակ բանը, որ կարող էին անել՝ համոզել Պ.Նուբարին ուղղակի բանակցությունների մեջ մտնել իրենց հետ: Սրանով փաստորեն Եվրոպային ցույց կտրվեր, որ հայկական բարեռորոգումների հարցը կլուծվի հայերի և թուրքերի համաձայնությամբ, և անիմաստ կդառնար տերությունների միջամտությունը այդ խնդրում: Ուստի ձեռնարկվեցին բոլոր հնարավոր միջոցներն այդ նպատակին հասնելու համար:

Պ. Նուբարի գործունեության հենց սկզբում մեծ վեզիր Քյամիլ փաշայի կառավարությունը, արտգործնախարար Գ. Նորատունկյանի միջնորդությամբ, փորձ կատարեց նրան հրավիրել Կ.Պոլիս՝ բարեռորոգումների վերաբերյալ խորհրդակցելու: Կահիրեի «Յուսաբեր» թերթը իրավացիորեն այս հրավերը որակեց որպես «հրավեր հայկական դատի հուղարկավորությանը»[9]: Պ.Նուբարը, քաջ գիտակցելով դրա բացասական հետևանքները, հրաժարվում է մեկնելուց: Վ.Մալեզյանին ուղղած 1913 թ. հունվարի 3-ի նամակում նա գրում էր. «Եթէ ընդունիմ այդ հրաւերը, ազգային իշխանութեանց եւ հայրենակիցներուս կողմէ ինծի հանդեպ ցոյց տրուած

վստահութեան արդիւնքը եղող կացութիւնը, պիտի տկարանայ ամուլ վիճաբանութիւններով»[10]:

Պ.Նուբարի՝ ուղղակի թուրքական կառավարության հետ բանակցելու անհրաժեշտության մասին թուրքական «Բեյամ» թերթը գրում էր. «Պ.Նուբարը փոխանակ մեր մայրաքաղաքը գա և մեզ հետ ձեռք ձեռքի տալու, նույն իսկ ի հարկին մեր կառավարության մեջ պաշտոն ստանձնելով բարենորոգումների ծրագիրն ի գործ դնել աշխատելու, ինչու է հարկադրված զանազան երկրներ պտտել և այսքան կարևոր գործի համար բանակցել մեր օգուտը այնքան չմտածողների հետ»[11]:

Թուրքական իշխանությունների՝ եվրոպական վերահսկողությամբ բարենորոգումների իրագործման դեմ պայքարը իր արտացոլումը գտավ նաև թուրքական մամուլում: Ինչպես իթթիհադական («Թանին», «Թասֆիրի Էֆքյար», «Թերջումանը Հակկիկաթ», «Ժեռն Թուրք»), այնպես էլ ընդդիմադիր իթիլաֆական («Իդդամ», «Ազմ», «Յենի Գազեթա») թերթերը հայերին ներկայացնում էին որպես թուրք ազգի թշնամիներ, իսկ նրանց դիմումները տերություններին որակում որպես դավաճանություն: Մամուլի նման հարձակումներից զերծ չմնաց նաև Ազգային Պատվիրակության նախագահ Պ.Նուբարը, որը փաստորեն հանդիսանում էր այդ դիմումների կրողն ու իրագործողը: Թուրքական թերթերում պարբերաբար սկսեցին երևալ հոդվածներ, որտեղ քննադատության էր ենթարկվում Պ.Նուբարի գործունեությունը, միտումնավոր կեղծվում նրա պաշտոնի էությունը, սխալ մեկնաբանվում նրա դիմումները: Սրա միակ նպատակն էր ինչպես թուրքական, այնպես էլ եվրոպական հասարակությանը ցույց տալ հայերի՝ մեծ տերություններին դիմելու անօրինականությունը: Նման հոդվածների նպատակներից էր նաև, ինչպես գրել էր թուրքական «Թանին» թերթը, «սրբագրել նրա (Պ.Նուբարի–Հ.Բ.) ողջամտության վրա վստահություն ունեցողների մտքերը»[12]:

Նախ, ջանքեր գործադրվեցին կասկածի տակ առնելու Պ.Նուբարի առաքելության՝ արևմտահայերի համար բարենորոգումներ պահանջելու օրինականությունը: Այսպես՝ անգլիական «Թայմզ» թերթի 1913 թ. մայիսի 12–ի համարում Կ.Պոլսից ուղարկված մի տեղեկագրում նշվում էր, թե իբր Պ.Նուբարը ոչ թե թուրքահայերի, այլ Օսմանյան կայսրությունից դուրս գտնվող հայերի ներկայացուցիչն է[13]: Պ.Նուբարը նույն թերթում հերքեց այդ լուրը: Այս ուղղությամբ ավելի ակնհայտ կեղծիքով թուրքական «Ազմ» թերթը գրում էր. «Պողոս Նուբարի նախագահության տակ կազմված հանձնաժողովը Կաթողիկոսին դիմելով՝ հայոց անունով պաշտոնական հանգամանք ստանալու արտոնություն է խնդրել: Կաթողիկոսն իրեն հատուկ զգուշությամբ և վերապահությամբ այդ արտոնությունը չի տվել»[14]:

Նման կեղծ հայտարարությունները, բնականաբար, չէին կարող ազդել

Պ.Նուբարի գործունեության վրա: Սակայն թուրք իշխանությունները բնավ չհրաժարվեցին իրենց մտադրություններից՝ ամեն գնով խափանել Պ.Նուբարի առաքելությունը: Այս իմաստով հատկանշական է Պ.Նուբարին ներկայացված շատ ծանր, բայց միաժամանակ ամբողջովին անհիմն մեղադրանքը, թե իբր նա խառնվել է Թուրքիայի ներքին գործերին: Այս մեղադրանքի ներկայացման առիթը հանդիսացավ այն պարզ քաղաքավարական հանդիպումը, որը Պ.Նուբարը Փարիզում ունեցել էր իթիլաֆական կուսակցության առաջնորդներից մեկի՝ Շերիֆ-փաշայի հետ: Վերջինս Աբդուլ-Համիդ-2-ի կառավարման տարիներին եղել էր Շվեդիայում Թուրքիայի դեսպանը: 1913 թ. հունվարյան հեղաշրջումից հետո, երբ Թուրքիայում իշխանությունը նորից նվաճում են իթթիհադականները, Շերիֆն իր մի շարք համախոհների հետ մահվան է դատապարտվում, ապաստան գտնում Ֆրանսիայում և իր հիմնած «Մեշրութիեթ» թերթում դատապարտում իթթիհադականների վարած քաղաքականությունը և նրանց՝ իշխանությունից հեռացման կոչեր անում: Լինելով Եգիպտոսի մի իշխանուհու ամուսինը՝ նա ծանոթ էր Պ.Նուբարի հետ: Իրենց հանդիպման ընթացքում Պ.Նուբարը Շերիֆին ներկայացրել էր արևմտահայերի պահանջները: Վերջինս, արդարացի գտնելով դրանք, իր թերթում ի պաշտպանություն հայկական բարենորոգումների հանդես էր եկել մի շարք հոդվածներով: Հենց այս նկատառումով էլ թուրքական «Թասֆիրը Էֆքյար» թերթը, իր 1913 թ. հունիսի 18-ի համարում, ակնհայտորեն կեղծելով փաստերը, գրում էր. «Շերիֆ-փաշան, Պ.Նուբարի հետ գործակցելով, հայկական հանձնաժողովին (Ազգային պատվիրակությանը-Հ.Բ.) օժանդակած և նրանց ծրագիրը ընդունած է: Այս հանձնաժողովի բաղձանքի ու դիտավորությունների որ աստիճան վնասակար ու խռովարար լինելը կարելի է ընմբռնել նրա՝ Շերիֆի հետ գործակցելուց, ծանոթ լինելով, որ Շերիֆի բոլոր գործունեության ձեռնարկները հայրենիքը կործանելու, բնաջինջ անելու նպատակ ունեն»[15]:

Այս պնդումը ոչ մի քննադատության չի դիմանում: Ամբողջովին անհիմն է այն դատողությունը, թե եթե Շերիֆ-փաշան համամիտ է եղել Պ.Նուբարի հայացքներին, ապա Պ.Նուբարն էլ իր հերթին պետք է ընդունի Շերիֆի հայացքները և միանա նրան՝ Թուրքիայի իշխանությունների դեմ պայքարում: Ավելին՝ պետք է ասել, որ Շերիֆ-վաշան ընդունել էր միայն բարենորոգումների անհրաժեշտությունը, սակայն ինչպես և իթթիհադականները, միանգամայն դեմ էր եվրոպական վերահսկողությանը: Դա պարզորեն երևաց իթիլաֆականների՝ իշխանության գլուխ գտնվելու ընթացքում. Իսկ Շերիֆի հայտարարություններն ուղղված էին ոչ թե արևմտահայության բարելավմանը, այլ ավելի շուտ նրանց համակրությունը շահելուն և ավելորդ անգամ Թուրքիայի իշխանավորներին քննադատելուն:

Իր դեմ ուղղված մեղադրանքները, բնականաբար, միանգամից հերքվեցին Պ.Նուբարի կողմից. «Մեր հետապնդած նպատակը հույժ բացահայտ է, իմ գրածները մեջտեղ են և ծածկելիք բան չունենալն հայտնի է: Ես միշտ հեռու մնացած եմ Թուրքիայի ներքին քաղաքականության խնդիրներից»[16]:

Նման մեղադրանքը, որի հիմնական նպատակն էր վարկաբեկել Պ.Նուբարին՝ ցույց տալով, որ նա խառնվել է Թուրքիայի ներքին գործերին, կուսակցական պայքարին և նպատակ ունի «կործանելու և բնաջինջ անելու հայրենիքը», կարող էր մեծ հարցականի տակ դնել նրա հետագա գործունեությունը և հայկական հարցի նպաստավոր լուծումը: Կաթողիկոսին ուղղած նամակում Պ.Նուբարը ընդգծում էր, որ «այս զրպարտությունները ուզում են որպես քաղաքական զենք գործածել իմ գործունեությունը խաթարելու համար»[17]:

Եվ, իրոք, այս կեղծ հայտարարությունը որոշակի կասկածներ առաջ բերեց մեծ տերությունների և հատկապես Ռուսաստանի ղեկավար շրջանակներում: Քանի որ Պ Նուբարը, ի շահ թրքահայոց խնդրի լուծման, պատրաստակամություն էր հայտնել (բնականաբար, ոչ պաշտոնապես) իր գործունեության ընթացքում հետևել ռուսական կառավարության հրահանգներին, ուստի Թուրքիայի նկատմամբ իր այդ քայլերը նույնպես կարող էին ընկալվել որպես Ռուսաստանի կողմից տրված հրահանգ: Այդ իսկ պատճառով Կովկասի փոխարքա Վորոնցով–Դաշկովը կաթողիկոս Գևորգ Ե–ին գրած 1913 թ. մայիսի 24–ի նամակում շեշտում էր. «Հայկական բնակչության ներկայացուցիչների նման արարքները կարող են հնարավորություն տալ թուրքական կառավարությանը ծանր մեղադրանքներ առաջադրել հայերի դեմ և խիստ դժվարացնել Կայսերական կառավարության խնդիրը՝ հայերի համար ցանկալի բարենորոգումների անցկացման գործում»[18]:

«Թասֆիրի Էֆքյար»–ում տպագրված հոդվածի մյուս նպատակներից էր Պ.Նուբարի գործունեության և ընդհանրապես հայերի դեմ գրգռելու մուսուլմանական բնակչությանը: Այդ նպատակին էր ծառայում նաև նույն թերթում տպագրված մեկ այլ հոդվածը, ուր խոսվում էր հայկական բարենորոգումներին ի նպաստ Պ.Նուբարի և Բեքստոնի գործակցության մասին: Վերջինս Լոնդոնում ստեղծված Բալկանյան կոմիտեի նախագահն էր և պրոպագանդիստական մեծ աշխատանք էր կատարել բալկանյան ժողովուրդների՝ թուրքական լծից ազատագրելու համար: «Բեքստոնի պես մարդու հետ Պ.Նուբարի գործակցելը,–գրում էր թերթը, –բնական է, որ գոհ չի ձգի ոչ մեկ օսմանցու և ոչ էլ իր բարյացակամության մասին հավաստիք կտա մեզ»[19]:

Պ.Նուբարի՝ եվրոպական մայրաքաղաքներում ծավալած գործունեու-

թյան հետևանքով խիստ սրվել էին հարաբերությունները թուրքական կառավարության և Ազգային Պատրիարքարանի միջև: Վերջինս գտնվում էր դժվարին կացության մեջ: Թեև պատրիարքը շարունակում էր օրինական ճանապարհով թուգրիրներ ներկայացնել Բ.Դռանը՝ բողոքելով արևմտահայության ծանր վիճակի համար, բայց միաժամանակ նաև գտնվում էր նամակագրական կապի մեջ Պ. Նուբարի հետ՝ նրան տալով որոշակի կարգադրություններ՝ որպես թուրքահայոց խնդրին ամենածանոթն ու առաջին շահագրգիռը: Սակայն նման ընթացքը հղի էր վտանգներով և հայտնի դառնալու դեպքում կարող էր որակվել որպես դավաճանություն: Այս մասին Զավեն պատրիարքը գրում էր. «Կարևոր էր, որ մեր գործակցութիւնը Պօղոս Նուբարի հետ հնար հղածին չափ գաղտնի պահուէր կառավարութենեն»[20]:

Այս իմաստով արևմտահայության ձեռնարկած քայլերը պետք է լինեին շատ զգույշ և գաղտնաբար, նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատրիարքարանում կային մեծ թվով թուրքական լրտեսներ: Այսպես, ցույց տալու համար Պատրիարքարանի մեղսակցությունը օտար միջամտությանը դիմելու մեջ, Թուրքիայի ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյը 1912 թ. դեկտեմբերին հայտարարում է, որ նա իրազեկ է Պատրիարքարանի, կաթողիկոսի և Պ.Նուբարի միջև փոխանակված թղթակցություններին և նույնիսկ ունի դրանց պատճենները: Սակայն հետագայում պարզվեց, որ այս հայտարարությունը չէր համապատասխանում իրականությանը:

Օտար միջամտությունից խուսափելու համար թուրքական կառավարությունը, թեև անարդյունք, սկսեց ջանքեր գործադրել բարենորոգումների իրականացման վերաբերյալ բանակցությունների մեջ մտնելու Կ.Պոլսի հայոց պատրիարքի և ազգային գործիչների հետ: Սրա նպատակն էր տերություններին ցույց տալ թուրքերի պատրաստակամությունը խնդիրը լուծել հայերի հետ համաձայնությամբ և անիմաստ դարձնել Պ.Նուբարի դիմումները: Այս մասին Վ.Փափազյանն իր հուշերում գրում էր. «Բանակցութեանց նպատակն է արգելել պետութեանց միջամտութիւնը և բերել տալու Ազգ. Պատուիրակութեան պետ Վսեմ Նուպար փաշան որպէսզի հիմէն անդամահատեն մեր եւրոպական գործունեութիւնը»[21]:

Ներքին գործերի նախարար Թալեաթը մի շարք հանդիպումներ է ունենում Զավեն պատրիարքի հետ, խոստանալով օսմանյան խորհրդարանում ապահովել հայ պատգամավորների ընտրությունը՝ հայերի պահանջած թվով, եթե պատրիարքը հայ ժողովրդի անունից մի մանիֆեստ հրապարակի, հայտարարելով, թե նա հավատում է օսմանյան կառավարության Անատոլիայում գործադրելիք բարենորոգումներին[22]: Միաժամանակ կառավարությունը փորձեց նորից մերձենալ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության անդամների հետ: Տեղի ունեցան

Թալեաթի, Խալիլ բեյի, Միդհատ Շուքրիի հանդիպումները Ակնունու, Գ. Փաստրմաջյանի, Վարդգեսի, ինչպես նաև Գ.Զոհրապի հետ՝ համոզելու համար հրաժարվել արտաքին ուժերին դիմելուց:

Կառավարության այս քայլերը իրենց արձագանքը գտան մամուլում: Այսպես «Թասֆիրը Էֆքյար»–ը գրում էր. «Հայերը կա՛մ պետք է հայտարարեն, որ Փարիզից Բեռլին թափառող պատվիրակությունն իրենց կամքով չէ, որ իրենք լիապես գոհ են թուրք ներկա ռեժիմից, կա՛մ պիտի խզեն Բ.Դռան հետ իրենց կապերը»[23]:

Մրա հետ մեկտեղ կառավարությունը որոշակի քայլեր կատարեց նաև ուղղակի Պ.Նուբարի հետ համաձայնության գալու ուղղությամբ: Այս նկատառումով Պ.Նուբարի հետ Փարիզում հանդիպումներ են ունենում Թուրքիայի ֆինանսների նախարար Զավիդ բեյը, օսմանյան ելևմտական պատվիրակության նախագահ Նայիմ բեյը, Ֆրանսիայում Թուրքիայի նախկին դեսպան Մունիր փաշան, իսկ Լոնդոնում՝ Անգլիայի թուրք դեսպան Թևֆիկ փաշան և Լոնդոնի կոնֆերանսում Թուրքիայի ներկայացուցիչ Հագգը փաշան: Նման հանդիպումների նպատակն էր Պ.Նուբարին հավաստիացնել, որ կառավարությունը հայերի կացությունը բարվոքելու համար մտադիր է իրականացնել բարենորոգումներ և համոզել հրաժարվել արտաքին միջամտությունից: Թեև այս ձեռնարկները ոչ մի արդյունքի չհասան, բայց և այնպես թուրքական «Ժեռն Թուրք», թերթը հիմնվելով «լավատեղյակ» աղբյուրների վրա, գրում էր, թե Պ.Նուբարը, համոզված լինելով, որ թուրքերը պետք է բարեկարգեն Անատոլիան, որոշել է հրաժարվել Ազգային Պատվիրակությունից[24]:

1913թ. վերջերին, երբ հայկական բարենորոգումների իրագործման շուրջ ծավալված բանակցությունները մոտենում էին ավարտին, Բ. Դռուռը ձեռնարկում է Ազգային Պատվիրակության գործունեության ձախողման վերջին փորձը: Դեկտեմբերի 3–ին Մեծ Վեզիր Սայիդ Հալիմը իր ֆրանսիական դեսպան Ռիֆաթ փաշայի միջոցով Պ. Նուբարին հրավիրում է Կ. Պոլիս բանակցելու բարենորոգումների վերաբերյալ: Պ. Նուբարը բնականաբար մերժում է այս առաջարկը: Կաթողիկոսին ուղղած 1913թ. դեկտեմբերի 19–ի նամակում նա գրում էր. «Ձիս հրաւիրելու նպատակն է ժամանակ շահելով և իբր թէ բարենորոգումներ գործադրելով, Պետութիւնները կատարված իրողութեան մը առջև դնելն է»[25]: Թուրքական կառավարության խորամանկ քայլերի հետևանքները քաջ գիտակցում էին նաև Ազգային Պատրիարքարանում և Կ.Պոլսի ռուսական դեսպանատանը: Դեսպան Գիրսը Ֆրանսիայում իր պաշտոնակից Իզվոլսկուն գրում էր .«Ես գտնում եմ, որ նրա (Պ.Նուբարի–Հ.Բ.) գալը իսկապես առիթ կտա ժամանակի ավելորդ ձգձգմանը՝ իր հետ անմիջական բացատրությունների պատրվակով»[26]:

Պատմական տվյալ ժամանակաշրջանում հայկական հարցի շուրջ մեծ տերությունների միջև ծավալված թիժ պայքարն, ի վերջո, ավարտվեց 1914 թ. հունվարի 26–ի հայկական վիլայեթներում բարենորոգումների անցկացման ռուս–թուրքական համաձայնագրով:

Սակայն այս պայմաններում էլ թուրքական կառավարությունը ամեն ինչ արեց բարենորոգումների իրականացումը խոչընդոտելու համար: Իթթիհադական առաջնորդներից Ջեմալ–փաշան իր հուշերում գրում էր. «Հայկական վիլայեթներում բարենորոգումների վերաբերյալ պայմանագիրը մեզ համար չուներ էական նշանակություն»[27]:

1914 թ. փետրվարի 17–ին Մեծ Վեզիր Սայիդ Հալիմը Պ.Նուբարին գրած նամակում առաջարկում է «բարենորոգումների գործադրութեան համար, իր նախագահած Դահլիճի մէջ նախարարական պաշտոն մը ստանձնել»[28]: Այս քայլը կրում էր զուտ ձևական բնույթ և նպատակ ուներ ցուցադրել կառավարության՝ բարենորոգումների իրագործման պատրաստակամությունը. Պ.Նուբարը փետրվարի 25–ի պատասխան նամակում մերժում է այս առաջարկը պատճառաբանելով, որ «ոչ մէկ վտրձառութիւն ունի Թուրքիոյ հանրային կեանքին մասին ու որուն լեզուն չի խոսում իսկ»[29]:

Արևմտահայության այդ չնչին ձեռք բերվածին, սակայն, վիճակված չէր իրականանալու: Երիտթուրքերը, օգտվելով Առաջին աշխարհամարտի ընձեռած հնարավորությունից, ոչ միայն չեղյալ հայտարարեցին վերոհիշյալ համաձայնագիրը, այլև իրականացրեցին հայերի ցեղասպանությունը: Նման պայմաններում «չմոռացվեց» նաև Պ.Նուբարը, որի՝ պատերազմի նախօրյակին ծավալած գործունեությունը մեծ անհանգստություն էր պատճառել թուրքական իշխանություններին: 1915 թ. օգոստոսին Կ.Պոլսի զինվորական դատարանը մի շարք մտացածին մեղադրանքներ է ներկայացնում Պ.Նուբարին, որոնց թվում էր նաև այն, որ նա, «օգտվելով Թուրքիայի՝ Բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած թուլությունից, որպես ամբողջ հայ ազգի պատվիրակ, գլխավորել է հայկական կոմիտեն և Եոյակ Համաձայնության տերությունների մայրաքաղաքներում օսմանյան կառավարության դեմ քայլեր է ձեռնարկել արտասահմանյան վերահսկողության ներքո անկախ Հայաստան ստեղծելու նպատակով», և ավելացվում էր, որ դատարան չներկայանալու դեպքում նա կդատապարտվի հեռակա կարգով, կզրկվի իր ունեցվածքից, քաղաքացիական իրավունքներից, զինվորական կոչումներից և պարգևներից[30]:

Այս մեղադրանքը կարծես փոխհատուցումն էր այն անհաջողությունների, որ թուրքական իշխանությունները կրել էին նախընթաց շրջանում՝ արդյունքի չհասնելով Պ.Նուբարի և նրա գլխավորած պատվիրակության գործունեությունը խափանելու փորձերում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին երիտթուրքերը, որդեգրելով իրենց նախորդների քաղաքականությունը, հանդես եկան արևմտահայության անտանելի կացության բարելավմանը, հատկապես եվրոպական վերահսկողության տակ, ուղղված յուրաքանչյուր ձեռնարկի դեմ՝ չփորձելով դրանում տեսնել իրենց պետության շահը: Այս իմաստով բացառություն չկազմեց Պ.Նուբարի ծավալած գործունեությունը, որի խափանման համար թուրքական իշխանությունները, թեև անարդյունք, օգտագործեցին իրենց ձեռքից եկած բոլոր միջոցները՝ չխորշելով նույնիսկ ստոր քայլերից:

Չնայած նման վերաբերմունքին՝ Պ.Նուբարը, հաջողությամբ վարելով ստանձնած պաշտոնը, իր գործունեության ընթացքում Թուրքիայի հանդեպ դրսևորեց շատ զգույշ կեցվածք՝ վտրձելով չդիպչել նրա շահերին ու ինքնասիրությանը, և հանդես չեկավ հակաթուրքական ոչ մի հայտարարությամբ կամ քայլով:

ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Փափազյան, Իմ յուշերը, հտ. 2, Բեյրութ, 1952, էջ 208:
2. ՀՀ Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 238, վավ 64, թ.1:
3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.57, ց.5, գ.33, թ.13:.
4. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, N 5196, 1913 թ:
5. Ե.Օտեան, Պօղոս Փաշա Նուպար (կենսագրական նօթեր), Կ.Պոլիս,1913, էջ70:
6. Վ.Մալեզեան, Ճամբուս ծայրը, հտ. Բ, Փարիզ,1955, էջ 47:
7. Ե.Օտեան, նշվ. աշխ., էջ 76:
8. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 28:
9. «Յուսաբեր», Կահիրե, N 166, 1913.
10. Վ. Մալեզեան, Ճամբուս վրայ (Յուշաքաղ), Բարիզ, 1950, էջ 307:
11. «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, N 5209, 1913:
12. «Ժամանակ»,Կ.Պոլիս, N 1643, 1913:
13. Ե. Օտեան, նշվ., աշխ., էջ 74:
14. «Ժամանակ», Կ.Պոլիս, N 1448, 1913:
15. Նույն տեղում, N1481, 1913:
16. «Բիւզանդիոն»,Կ.Պոլիս, N 5087, 1913:
17. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց.5, գ.43, թ. 4:
18. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆ., ց.1, գ. 206, թ. 9.

19. «Մշակ», Թիֆլիս, N140, 1913:
20. Զավեն Արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշերս. Վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 34:
21. Վ.Փափազյան, նշվ. աշխ., էջ 542:
22. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հտ. Բ, Փարիզ, 1935, էջ 73:
23. «Հորիզոն», Թիֆլիս, N 273, 1913:
24. «Ազգ», Բոստոն, N 49, 1913:
25. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 47, թ. 61.
26. АВПРИ РФ, ф. 151 Политархив, оп. 482, г.1913, д. 3465, л.60:
27. Джемаль Паша, Записки 1913—1919 гг., Тифлис, 1923, стр. 233.
28. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 58, թ. 42:
29. Նույն տեղում, թ. 43:
30. Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 194: